

4350

Հրա. Հ.Մ.Բ.Մ.ի Ուսմ. Շիջ.Վարչութեան

ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ
Հ. Ս. Բ. Մ. Ի

ՀԱՅ ՄԱՐՄԵԱՆՐԹԱԿԱՆ ԲՆԴՀ. ՄԻՌԻԹԻԻՆ

796

2-24

ՊՈՒՔՐԷՇ

Տպ. «Մասիս» 1925

ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ

Լ. Մ. Ը. Մ. Ի

(ՀԱՅ ՄԱՐՄԵՆԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻԻՆ)

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդ. 1.— Հ. Մ. Ը. Մ. Ի նպատակն է ֆիզի-
քական առողջ դաստիարակութիւն մը տալով
պատանիին՝ սատարել ցեղին բարոյական և իմա-
ցական բարձրացման: Սորվեցնել անոր՝ ըլլալ
չարքաչ և ժուժկալ, կարգապահ և օրինապահ,
արթուն, արագ և ճիշտ դատող, ձեռներէջ, կո-
րովի, արի, հայրենասէր՝ դարգացնելով անհա-
տին մէջ պարտականութեան, պատասխանատու-
ութեան և պատուի գլխացումներ, համերաշխու-
թեան և փոխադարձ օգնութեան ոգի:

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

Յօդ. 2.— Հ. Մ. Ը. Մ. Ի իր նպատակը ի-
րագործելու համար ի դորձ կը դնէ հետեւեալ մի-
ջոցները:

Ա. Սկսած տական կրթութիւն՝ կազմելով
ս կ ա ու աներու և կ ա յ տերու խումբեր՝ իրենց
յարակից դասերով (Գայլիկներ, Երէցներ և խն):

Բ. Շուէտական մարզանք՝ իր նորադոյն
մէթոտներով:

Գ. Աթլէթիք և դաշտային խաղեր (Ֆութ-
պօլ, Պասքէթպօլ, Թենիս և խն), Որսորդական
արշաւներ, ծովային մարզանքներ և խն:

Դ. Դասախօսութիւններ:

Ե. Հրատարակութիւն, հանդէսներու գըր-
քոյկներու, գիրքերու միութեան նպատակին
հետ սերտ առնչութիւն ունեցող նիւթերու վրայ:

Զ. Մատենադարաններ՝ օժտուած միութե-
ան առաջադրած նպատակին իրագործման
ծառայող գիրքերով:

Է. Հաւաքավայրեր և մարզարաններ:

Ա Ն Դ Ա Մ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Յօդ. 3.— Հ. Մ. Ը. Մ. Ի կրնայ անդա-
մակցիլ և օթը տարեկանը լրացնող ամէն հայ:

Յ. 4.— Միութեան անդամակցիլ փափաքող
մը պարտի գլմել իր քաղաքի մասնաճիւղին
ստորագրելով «Անդամակցութեան Առաջարկ» մը.
մասնաճիւղային վարչութիւնը պարտաւոր է մին-
չև 15 օր յայտնել իր որոշումը: Ընդունուած
անդամի մը գէմ Շրջանային Վարչութեան կող-
մէ ըլլալիք ս և է գիտողութիւն և որոշում պէտք
է նվազի առնուի և տառապէս գործադրուի
մասնաճիւղային վարչութեան կողմէ:

Յօդ. 5.— Շրջանային վարչութիւնը անդամի

մը մասին ու է առարկութիւն չունենալու պարագային կը զրկէ «ինքնութեան տոմս»ը:

Յօդ. 6.— Միութեան անդամները կ'ըլլան Ս. Գործօն.

Բ. Համակիր:

Յօդ. 7.— Գործօն կը նկատուին եօթը տարեկանէն սկսեալ մինչեւ քսան տարեկանը լրացնողները:

Յօդ. 8.— Եօթնէն տասներկու տարեկանները պարտին հետեւի սկսուտական նախապատրաստական ճիւղին:

Յօդ. 9.— Տասներկու տարեկանէն մինչեւ տասնըկէց տարեկան, պարտաւոր են մնալ սկսուտական շարքերու մէջ:

Յօդ. 10.— Տասնըկէց տարեկանը լրացնելէ վերջ, միութեան անդամակցողները սկսուտական շարքերու մէջ չեն ընդունուիր, եւ սակայն պարտաւոր են մինչեւ քսան տարեկանը լրացնելը, հետեւի որ եւ է մարզական ճիւղի:

Յօդ. 11.— Համակիր կը նկատուին քսան տարեկանէն վեր եղողները, իսկ անոնք որ ունենան հերպոլ կը շարունակեն աշխատիլ մասնաճիւղերու ներքին կեանքին մէջ, կը պահեն «գործօն»ի հանդամանքը:

ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 12.— «Բարերար անդամ կը հռչակ-

ւին անդամ կամ ոչ անդամ այն անհատները՝ որոնք նիւթական կարեւոր նուիրատուութիւն մը կ'ընեն միութեան:

Յօդ. 13.— «Պատուակալ անդամ» կը հռչակուին անդամ կամ ոչ անդամ այն անհատները՝ որոնք գնահատելի ծառայութիւն մը կը մատուցանեն միութեան:

Յօդ. 14.— Բարերար կամ Պատուակալ հռչակուելու առաջարկ մը պէտք է դա՛յ Մասնաճիւղային վարչութեան մը կողմէ, որմէ վերջ ճշմանային վարչութիւնը հաւանութիւնը տալու պարագային, կը տեղեկացնէ կեդր. վարչութեան, տա՛նալու համար հռչակումի պաշտօնաթուղթը:

Յօդ. 15.— Կեդրոնական վարչութիւնը կրնայ ինքն ալ իր յարմար դատած մէկ անձը ուղղակի բարերար կամ պատուակալ անդամ հռչակիլ:

ՄԱՍՆԱԾԻՒՂՆԵՐ

Յօդ. 19.— Մասնաճիւղի մը կազմութեան համար անհրաժեշտ են առնուազն քսան հոգի:

Յօդ. 17.— Նուագադա՛սն ութը հոգի կրնայ ղեմել իրեն մօտ եղող չճշմանի վարչութեան, եւ անոր կողմէ ցոյց տրուելիք մասնաճիւղի մը հետ կապ հաստատել: Այս ութը հոգիները իրենց մէջէն կ'ընտրեն երեք հոգիէ բաղկացած «Առ-

ժամեայ վարչութիւն» մը, որ ինքնազուլու չէ՝ այլ իր պատկանած Մասնաձիւղային վարչութեան հրահանգներով կը ղեկավարուէի մինչև որ անդամներու թիւը հասնի քսանի, որմէ յետոյ իբր առանձին վարչութիւն կը վաւերացուի եթէ յարմար տեսնուի:

Յօդ. 18.— Մասնաձիւղերը ունին երկու ժողով:

Ա. Մասնաձիւղային Ընդհանուր Ժողով:

Բ. Մասնաձիւղային վարչական Ժողով:

ՄԱՍՆԱԶԻԼԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Յօդ. 19.— Մասնաձիւղային Ընդհանուր ժողովներու կը մասնակցին բոլոր անդամները՝ բացի պատուակալ, բարերար և տասներկու տարեկանը չըրացնող անդամներէ:

Յօդ. 20.— Տասներկու քէն տասներէնդ տարեկանները կը մասնակցին Ընդհ. ժողովներու առանց քուէի իրաւունքի:

Յօդ. 21.— Եօթնէն տասներկու տարեկանները իրենց առաջարկները կամ զիտողութիւնները կը ներկայացնեն Ընդհ. Ժողովին իրենց խմբապետին, փոխ խմբապետին կամ խմբակի առաջնորդներու ներկայացուցիչին միջոցաւ:

Յօդ. 22.— Մասնաձիւղային Ընդհ. Ժողովը կը ղեկավարուի սովորական ղեկանով մը:

Յօդ. 23.— Մասնաձիւղային Ընդհ. Ժո-

ղովին պաշտօնն է, լսել վարչութեանց համարառուութիւնը և հաշուետուութիւնը, ընտրել նոր վարչութիւնը, լուծել օրակարգի վրայ գտնուած խնդիրները, ընտրել Շրջանային Ընդհ. Ժողովին համար պատգամաւորներ:

Յօդ. 24.— Մասնաձիւղային Ընդհ. Ժողովները կը ղուժարուին տարին մէկ անգամ. բացառիկ ժողովներ կրնան ըլլալ:

Ա. Երբ մասնաձիւղային վարչութիւնը հարկ տեսնէ,

Բ. Երբ քուէի իրաւունք ունեցող անգամներու մէկ երրորդը զրաւոր պատճառաբանութեամբ մը պահանջէ:

Յօդ. 25.— Մասնաձիւղային Ընդհ. Ժողովներու ներկայ եղողներու ու է թիւ մեծամասնութիւն կը նկատուի. պայմանաւ որ ղուժարումէն առնուազն երեք օր առաջ հրաւէր ըլլայ տեղական թերթերու միջոցաւ, եթէ կան, և կամ մասնաւոր նամակով:

ՄԱՍՆԱԶԻԼԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 26.— Վարչութիւնը կը ղաղկանայ եօթը հոգիէ որոնք կ'ըլլան ատենապետ, ատենադիր, գանձապետ, համարակալ, գոյքապահ, (առնել կը կոչուին վարչական անդամներ), սկաւաւ և չուէտականի խմբապետ, արկիթիք և

փութալի խմբապետ (ասոնք կը կոչուին մարզական անդամներ):

ՇԱՆՈԹ.— Մասնաձիւղերու վարչութեան ընտրելի անդամները 18 տարեկանը լրացուցած պէտք է ըլլան:

Յօդ. 27.— Վարչութեան մը վարչական անդամներէն մէկ կամ երկուքին հրաժարման պարագային, տեղը նորեր կ'առնուին Ընդհ. ժողովին մէջ վարչութեան ընտրութեան առթիւ առաւելագոյն քուէ շահողներէն: Իսկ մեծամասնութեան հրաժարելու պարագային նոր ընտրութիւն կը կատարուի:

Յօդ. 28.— Վարչութիւնը կը պաշտօնաւարէ միայնմէկ տարի:

Յօդ. 29.— Վարչութիւնը ընտրուելէ վերջ կը վաւերացուի չրջանի վարչութիւնէն:

Յօդ. 30.— Եթէ մասնաձիւղի մը մէջ գտնուին մէկէ աւելի սկստւտական խմբեր եւ անոնց վարիչները ունենան հաւասար աստիճաններ, անոնք կ'ընտրեն իրազօր աւագ վարիչ մը որ պէտք է մաս կազմէ վարչութեան իրր սկստւտ եւ չուէտականի խմբապետ:

Յօդ. 31.— Մասնաձիւղային վարչութիւնները պարտաւոր են ամէն ամսոյ վերջ իրենց տեղեկագիրը գրելի չրջանի վարչութեան:

Յօդ. 32.— Մասնաձիւղային վարչութիւնք պէտք է ջանան Հ. Մ. Բ. Մ. ի առաջադրած

նորատակը իրազօրծելու համար ցոյց տրուած միջոցները հաւասարապէս գործադրել:

ՇԱՆՈԹ.— Կեդրոնական վարչութեան, Կեդրոնի յանձնախումբերու եւ Շրջանային վարչութեան անդամները՝ մասնաձիւղերու մէջ պատասխանատու պաշտօն չեն կրնար ստանձնել:

Ծ Ր Զ Ա Ն Ն Ե Ր

Յօդ. 33.— Երբ երկրի մը կամ քաղաքի մը մէջ մէկէ աւելի մասնաձիւղեր գտնուին, Կեդրոնական վարչութիւնը կրնայ անոնցմէ կազմել չրջան մը:

Յօդ. 34.— Շրջան մը կ'ուսնեայ երկու ժողով Ա. Շրջանային Ընդհանուր ժողով.

Բ. » Վարչական ժողով:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.

Յօդ. 35.— Շրջանային Ընդհ. ժողովը կը գումարուի տարին մէկ ֆանդամ, չրջանը կազմող մասնաձիւղերու Ընդհ. ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներով:

Յօդ. 36.— Շրջանային Ընդհ. ժողովի տեղը, օրը եւ ժամը կը ծառայուի Շրջանային վարչութեան կողմէ՝ գումարումէն ամիս մը առաջ:

Յօդ. 37.— Բացառիկ Շրջանային Ընդհ. ժողովներ կը գումարուին եթէ այդ չրջանը կազ-

մող մասնաձիւղերու պատգամաւորներու մէկ
երրորդը պահանջէ :

Յօդ. 38.— Մասնաձիւղերը իրենց պատգա-
մաւորները կ'ընտրեն հետեւալ հիման վրայ :

Ա. Նուազագոյն քսան անդամի համար մէկ
պատգամաւոր :

Բ. Քսանէն վեր իւրաքանչիւր յիսուն ան-
դամի համար մէկ պատգամաւոր :

Յօդ. 39.— Մասնաձիւղերը կրնան իրենց
պատգամաւորները ընտրել ուրիշ մասնաձիւղե-
րու պատկանող անդամներէն ալ :

Յօդ. 40.— Շրջանային Ընդհ. Ժողովի
պաշտօնն է.

Ա. Քննել իրեն ենթակայ մասնաձիւղերու
տարեկան գործունէութեան տեղեկագիրները՝
զորս պատգամաւորները պարտին ներկայացնել :

Բ. Ընտրել Շրջանային Վարչութիւնը :

Գ. Ընտրել Ընդհ. Պատգամաւորական Ժո-
ղովին համար պատգամաւորներ :

Յօդ. 41.— Շրջանային Ընդհ. Ժողովները
իրենց պատգամաւորները կ'ընտրեն հետեւալ
հիման վրայ. —

Մէկէն մինչեւ եօթը պատգամաւոր ունե-
ցող շրջանները մէկ պատգամաւոր, իսկ անկէ
վեր իւրաքանչիւր հինգ պատգամաւորի փոխա-
րէն մէկ պատգամաւոր :

Օրինակ՝ Շրջանային Ընդհ. Ժողովին մէջ

17 պատգամաւոր ունեցող շրջան մը՝ կ'ընտրէ
3 պատգամաւոր Ընդհ. Պատգամաւորական Ժո-
ղովին համար :

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 42.— Շրջանային Վարչութեան պաշ-
տօնը կը տեւէ մէկ տարի :

Յօդ. 43.— Շրջանային Վարչութիւնը կը
բաղկանայ 7 հոգիէ, որոնց երկուքը կ'ըլլան
մարզական և սկսուած մասնագէտներ :

Յօդ. 44.— Շրջանային Վարչութիւնը
կրնայ եթէ պէտք տեսնէ, կազմել յանձնախում-
բեր սկսուածական և դաշտային խաղերու համար :

Յօդ. 45.— Շրջանային Վարչութիւնը ա-
մէն ամիս իր իսկ գործունէութեան մէկ տեղե-
կագիրը, ինչպէս նաեւ ՅՁրդ յօդուածի համաձայն-
իրեն ենթակայ մասնաձիւղային վարչութիւն-
ներէն զայիք տմսական տեղեկագիրներու մէկ
ամփոփումը կը զրկէ Կեդր. Վարչութեան :

Յօդ. 46.— Շրջանային Վարչութիւնը կրնայ
նշանակել քննիչներ, շրջանին վերաբերեալ գոր-
ծերու մասին ամէն տեսակ քննութիւն կատա-
րելու պաշտօնաւ :

Քննիչները կրնան մասնակցել խորհրդակցա-
կան ձայնով Մասնաձիւղային Ընդհ. Ժողովներու :

Յօդ. 47.— Շրջանի մը մաս չկազմող մաս-
նաձիւղերը ուղղակի Կեդր. Վարչութեան հետ
կապ կը պահեն և անոր պատասխանատու են :

ՎԵՐԻՆ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 48.— Հ. Մ. Ը. Մ. Ի Վերին երկու ժողովներն են,

Ա. Ընդհ. Պատգամաւորական ժողով:

Բ. Կեդրոնական Վարչական ժողով:

Յօդ. 49.— Ընդհ. Պատգամաւորական Ժողովը կը զուգարուի երեք տարին անգամ մը Շրջանային Ընդհ. ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներով: Եւրամարագոյն վայր մը կ'որոշուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Յօդ. 50.— Ընդհ. Պատգ. ժողովոյ պաշտօնն է.

Ա. Քննել շրջաններէ եկած տեղեկագիրները:

Բ. Ընտրել Կեդր. Վարչական ժողովը:

Գ. Որոշել Միութեան ընդհանուր սեղեղիքը:

Դ. Քննել և վաւերացնել, ի հարկին միութեան երմագոյնը:

Ե. Ընտրել մուշտն հաշուեքննիչ մարմին մը երեք հոգիէ բաղկացեալ:

Յօդ. 51.— Բացառիկ Ընդհ. Պատգամաւորական ժողովներ կրնան զուգարուիլ

Ա. եթէ Կեդր. Վարչական ժողովը պէտք տեսնէ,

Բ. եւ կամ պատգամաւորներու մէկ երրորդը պահանջէ:

Յօդ. 52.— Ընդհ. Պատգամաւորական Ժողովոյ անդամներու պաշտօնը կը տեւէ երեք տարի:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 53.— Կեդրոնական Վարչական ժողովը կ'ընտրուի Ընդհ. Պատգ. ժողովէն և կը բաղկանայ եօթն անդամէ և չորս փոխանդամէ: այս վերջինները ժողովներու կը մասնակցին խորհրդակցական ձայնով:

Յօդ. 54.— Եթէ Կեդր. Վարչական ժողովը իր մեծամասնութիւնը կորսնցնէ, Ընդհ. Պատգ. ժողովը կ'ընտրէ նոր Վարչական ժողով մը:

Յօդ. 55.— Եթէ Կեդր. Վարչական ժողովի անդամներէն մին հրաժարի, փոխանդամներէն առաւելագոյն քուէ չահողը անոր կը յաջորդէ:

Յօդ. 56.— Կեդր. Վարչական ժողովի ղեւանը կը բաղկանայ մէկ ատենադահլէ և մէկ ատենադպիրէ:

Յօդ. 57.— Կեդր. Վարչական ժողովի անմները կ'ընտրուին քսանմէկ տարեկանը լրացնող զործօն և համակիր անդամներէն:

Յօդ. 58.— Կեդր. Վարչական ժողովը իրեն օժանդակ պէտք է տեսնէ հետեւալ յանձնախումբերը.—

Ա. Սկառուտական,

Բ. Մարզական (Շուէտական, Ֆուտպոլ, Աթլէթիկ):

Գ. Բրօքսկանոս (մամուլ, զաստիստութիւն և այլն):

Յօդ. 59.— Վերոյիշեալ յանձնախումբերէն

դատ կեդր. վարչ. ժողովը կրնայ իր անհրաժեշտ նկատած յանձնախումբերը ընտրել:

Յօդ. 60.— Կեդր. վարչական ժողովի պաշտօնն է

Ա. Գործադրել Միութեան ծրագիրը:

Բ. Միութեան բոլոր գործերուն վերին հսկողութիւնը կատարել:

Գ. Պատրաստել իր երմտացոյցը և ներկայացնել Ընդհ. Պատգ. ժողովին:

Դ. Ծանօթացնել հայութեան բոլոր մասերուն և խաւերուն՝ Հ.Մ.Ը.Մ.ը ևւ տարածել դայն:

Կեդր. վարչութեան պաշտօնը կը տեւէ երեք տարի:

Պ Ի Ի Տ Ճ Է

Յօդ. 61.— Շրջանի պիւտճէն ապահովող միջոցներն են.

Ա. Ողիմպիական մրցումներ,

Բ. Վիճակահանութիւններ,

Գ. Զանազան հանդէսներ (մարզական թատերական և երաժշտական):

Դ. Յուլահանդէսներ և պաղար (սկսուածներու կողմէ չինուած առարկաներու)

Ե. Վաճառում միութեան կողմէ հրատուած գրքերու և գրքոյկներու:

Բ. Նուիրատուութիւններ և հանդանակութիւն:

Յօդ. 62.— Մասնաձեռները պարտին իրենց հասոյթներուն 30%ը զրկել չըջանին վարչութեան:

Յօդ. 63.— Շրջանի մը մաս չկազմող մասնաձեռները վերոյիշեալ 30%ը պարտին զրկել ուղղակի կեդր. վարչութեան:

Յօդ. 64.— Շրջանային վարչութիւնք իրենց մասնաձեռներէն ստանալիք 30%էն 10%ը միայն իրենց համար վար դնելով՝ 20%ը պարտին զրկել կեդր. վարչութեան:

Յօդ. 65.— Շրջանային վարչութիւններու նախաձեռնութեամբ գոյացած ու եւ է հասոյթի 30%ը նոյնպէս պէտք է զրկել կեդր. վարչական ժողովին:

ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Յօդ. 66.— Միութիւնը պէտք է ջանայ

Ա. Նիւթական միջոցներ տրամադրել միութեան անդամներէն պատրաստելու համար մասնադէտներ՝ սկսուածական և մարզական ձեռներու:

Բ. Միջազգային ողիմպիական մրցումներուն մասնակցութեան: Առյն մրցումներուն զրկուելիք մարզիկները կ'առնուին Հայկ. Ընդհ. Ողիմպիական մրցումներու մէջ համաշխարհա-

յին մրցանիչերու մօտ նիշուհեցող իր անդամ-
ներէն, որոնց մէջէն յաջողագոյնները կ'որոշուին՝
Միջազգային Ողիմպիական մրցումներու թուա-
կանէն երկու ամիս առաջ՝ կեղը՝ Վարչական
Ժողովէն նշանակուած դատաւորներու ներկա-
յութեան տեղի ունենալիք մասնակի մրցումին:

Գ. Ունենալ զանազան երկիրներու մէջ
գումարուող Միջազգային Սկսուսական եւ
Մարմակրթական Համաժողովներու մէջ ներ-
կայացուցիչ:

Հ. Մ. Բ. Մ. Ի

ՊՍՏԳՍՄՍԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ.

1921 Յունիս 19

Կ. Պոլիս



0013430

2013

4350

ՀՀ Ազգային գրադարան



NL0013430

100